ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 75

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ„ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասի և „Պետական կառավարչական հիմնարկների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել „Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմ„ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Ավետիսյան Հերմոն

Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
24-Ի ԹԻՎ 75 ՈՐՈՇՄԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# „ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ„ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԱՐՏԱՇԱՏ 2013թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

---

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի /այսուհետ՝ Համայնք/ քաղաքապետարանի աշխատակազմը /այսուհետ՝ Աշխատակազմ/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու /այսուհետ՝ Ավագանի/ կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև Ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:
2. Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, համայնքային ծառայողների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:
Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:
3. Ավագանին և Համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում Համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:
4. Աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Ավագանու որոշմամբ:
5. Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ Ավագանու որոշումներով, Համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:
6. Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:
7. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
8. Աշխատակազմը կազմված է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից:
9. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը Համայնքի ղեկավարի և Ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին Համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:
10. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Համայնքը:
11. Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:
12. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

13. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:
16. Աշխատակազմի լրիվ անվանումն է՝ <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ:
17. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ քաղաք Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է Համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:
19. Համայնքի ղեկավարն՝ իր լիազորություններն իրականացնում է Աշխատակազմի /մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների/, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

20. ***<u>Համայնքի ղեկավարը</u>*** ՝

1/ Աշխատակազմի /այդ թվում առանձնացված ստորաբաժանումների/ և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է Ավագանու հաստատմանը.
2/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.
3/ օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.
4/ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում.
5/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
21. Համայնքի ղեկավարն ունի տեղակալներ, խորհրդականներ, օգնականներ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է անձամբ:

22. ***<u>Համայնքի ղեկավարի տեղակալները</u>*** ՝

1/ հաշվետու և պատասխանատու են Համայնքի ղեկավարի առջև

2/ կազմակերպում, կոորդինացնում և համակարգում են Համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, Աշխատակազմի բաժինների աշխատանքները՝ Համայնքի ղեկավարի կողմից իրենց հանձնարարված բնագավառներում.

3/ կազմակերպում և համակարգում են Համայնքի տարածքում գործող ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի և այլ ծառայություններ իրականացնող կազմակերպությունների հետ Աշխատակազմի ու համայնքի ազգաբնակչության փոխհարաբերությունները.

4/ Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում են իրենց հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին /մասնագետներին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին/ տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

5/ Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում են Ավագանու և Համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.

6/ համակարգում են իրենց հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի /մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների/, ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

7/ իրենց լիազորությունների սահմաններում համագործակցում են պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

8/ իրենց հանձնարարված բնագավառներում համակարգում են համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.

9/ պարբերաբար Համայնքի ղեկավարին են ներկայացնում տեղեկատվություն իրենց հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.

10/ ապահովում են իրենց հանձնարարված բնագավառներում Ավագանու որոշումների և Համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում Համայնքի ղեկավարին.

11/ Համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

12/ ստորագրում են իրենց և Աշխատակազմի բաժինների կողմից պատրաստվող փաստաթղթերը.

13/ Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ:

23. Համայնքի ղեկավարի տեղակալներից որևիցե մեկը Համայնքի ղեկավարի որոշմամբ փոխարինում է Համայնքի ղեկավարին, վերջինիս բացակայության ժամանակ:

24. ***<u>Համայնքի ղեկավարի խորհրդականները՝</u>***

1/ հաշվետու և պատասխանատու են Համայնքի ղեկավարի առջև.

2/ համաձայնեցնելով Համայնքի ղեկավարի հետ՝ կազմում են իրենց աշխատանքային ծրագրերը.

3/ պարբերաբար Համայնքի ղեկավարին են ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին ու առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

4/ նախապատրաստում են անհրաժեշտ նյութեր Համայնքի ղեկավարի ելույթների, զեկուցումների, հաշվետվությունների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, հոդվածների համար.

5/ իրականացնում են կապը հասարակական, քաղաքական կազմակերպությունների, մասսայական ինֆորմացիայի միջոցների հետ.
6/ նախապատրաստում են Համայնքի ղեկավարի պաշտոնական այցելությունների և ընդունելությունների համար անհրաժեշտ փաստաթղթեր.
7/ կազմակերպում և համակարգում են Համայնքի տարածքում անցկացվող սոցոլոգիական հետազոտությունների, դրանց արդյունքների ամփոփման և համապատասխան եզրակացությունների, ծրագրերի ու կանխատեսումների գործը.
8/ ապահովում են արտաքին կապը քույր քաղաքների հետ, իրականացնում են միջոցառումներ նոր արտաքին կապեր ստեղծելու և դրանք զարգացնելու ուղղությամբ.
9/ ապահովում են Համայնքի ղեկավարի մոտ արտասահմանյան երկրներից ժամանած բարձրաստիճան հյուրերի ընդունելության կազմակերպման աշխատանքները, կնքված պայմանագրերի և դրանց հետ կապված ծրագրերի իրականացումը.
10/ Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ վերահսկում և խորհրդատվություն են իրականացնում կազմակերպվող կրթական, մշակութային, սպորտային և այլ միջոցառումների ծրագրերի վերաբերյալ.
11/ մասնակցում են Համայնքի ղեկավարի մոտ անցկացվող քաղաքացիների ընդունելությանը և Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ աջակցում են բարձրացված հարցերին և խնդիրներին դրական լուծումներ տալուն.
12/ իրականացնում են Համայնքի ղեկավարի և Ավագանու գործունեության իրավական ապահովումը.
13/ եզրակացություն են տալիս Համայնքի ղեկավարի կողմից կնքվող պայմանագրերի օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ.
14/ Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ ներկայացնում են Համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.
15/ համապատասխան եզրակացություն են տալիս խնամակալության, հոգաբարձության մասին որոշման նախագծերի վերաբերյալ.
16/ աջակցում են Համայնքի բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը.
17/ մասնակցում են Համայնքի ղեկավարի և Ավագանու քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստմանը.
18/ կատարում են Համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարություններ:

25. *<u>Համայնքի ղեկավարի օգնականները</u>՝*

1/ հաշվետու և պատասխանատու են Համայնքի ղեկավարի առջև.
2/ կազմակերպում, ղեկավարում և համակարգում են Համայնքի ղեկավարի ընդունարանի աշխատանքները.
3/ կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն են ցուցաբերում Համայնքի ղեկավարին.
4/ համաձայնեցնելով Համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում են Համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում Համայնքի ղեկավարին.
5/ կազմակերպում են Համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.
6/ համագործակցելով Աշխատակազմի /մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների/ հետ՝ Համայնքի ղեկավարի համար նախապատրաստում են տեղեկատվական և վերլուծական նյութեր.
7/ նախապատրաստում և Համայնքի ղեկավարին են ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.
8/ կատարում են Համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարություններ:

26. ***Ավագանին***

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

1/ ընդունում է իր կանոնակարգը.

2/ հաստատում է Համայնքի զարգացման ծրագիրը.

3/ հաստատում է Համայնքի բյուջեն, բյուջեի՝ Համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

4/ վերահսկում է Համայնքի բյուջեի կատարումը և Համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը.

5/ որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ Համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

6/ նախաձեռնում և օրենքով սահմանված կարգով նշանակում է տեղական հանրաքվե.

7/ վերահսկողություն է իրականացնում Համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

8/ դատական կարգով կարող է վիճարկել Համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումները.

9/ որոշում է Համայնքի ղեկավարի վարձատրության չափը.

10/ որոշում է կայացնում առաջարկություն ներկայացնել մարզպետին, Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու վերաբերյալ.

11/ որոշում է կայացնում Ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ.

12/ օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, Համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

13/ իր որոշմամբ համաձայնություն է տալիս Համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին.

14/ օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

15/ սահմանում է Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

16/ իրականացնում է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

17/ Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին.

18/ որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ.

19/ որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ.

20/ որոշում է կայացնում Ավագանու կանոնակարգին համապատասխան Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կամ պատվավոր կոչումից զրկելու մասին.

21/ որոշում է կայացնում Համայնքի զինանշանի վերաբերյալ.

22/ Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում Աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ.

Համայնքային ծառայության պաշտոնների մասով Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և /կամ/ հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և /կամ/ լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և /կամ/ լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին.

23/ որոշում է ընդունում Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

24/ հաստատում է Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է Համայնքը.

25/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.

26/ հաստատում է Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

27/ հաստատում է Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը.

28/ պետական լիազորված մարմին առաջարկություն է ներկայացնում կամ համաձայնություն է տալիս Համայնքի անվանափոխության վերաբերյալ.

29/ քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշում.

30/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

27. Աշխատակազմի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:

28. *Աշխատակազմի քարտուղարը՝*

1/ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Համայնքի ղեկավարի որոշումների, Աշխատակազմի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2/ իր իրավասության շրջանակներում իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

3/ մասնակցում է Աշխպտակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին.

4/ մշակում և Համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է Համայնքի ղեկավարին.

5/ ապահովում է Ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստերին ներկա Ավագանու անդամների կողմից արձանագրությունների վավերացումը.

6/ կազմակերպում և ապահովում է Աշխատակազմի աջակցությունն Ավագանու անդամների կողմից Ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը.
7/ ապահովում է Աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.
8/ կազմակերպում և ապահովում է Համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.
9/ ապահովում է Ավագանու և Համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.
10/ կազմակերպում է Համայնքի ղեկավարի և Ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.
11/ Համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև Ավագանու ընդունած՝ Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.
12/ վերահսկողություն է իրականացնում Համայնքի ղեկավարի և Ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև Աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
13/ ապահովում է Ավագանու որոշումների առաքումը մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.
14/ ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.
15/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.
16/ օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.
17/ <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.
18/ վարում է Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների և ժամկետային աշխատանքային պայմանագրերով համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնող անձանց վերաբերյալ գրանցամատյանը.
19/ անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին.
20/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
29. Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

30. ***Առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող քաղացիական կացության ակտերի գրանցման Արտաշատի տարածքային բաժնի պետը՝***

1/ անմիջականորեն ենթակա և հաշվետու է Համայնքի ղեկավարին և /կամ/ Աշխատակազմի քարտուղարին.
2/ կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակցին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.
3/ կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4/ կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
5/ միջոցներ է ձեռնարկում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.
6/ բաժնի աշխատողներին բացատրում է նրանց պարտականությունները.
7/ իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
8/ ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
9/ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
10/ ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
11/ իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնական պարտականությունների ժամանակին և պատշաճ որակով կատարման նկատմամբ.
12/ վարում է բաժնի արխիվը.
13/ Համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
14/ պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
15/ Համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
16/ Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.
17/ ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.
18/ ապահովում է Ավագանու որոշումների, Համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է Համայնքի ղեկավարին ու Աշխատակազմի քարտուղարին.
19/ քաղաքացիական կացության ակտերում զինապարտների կողմից իրենց ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը փոխելու, ինչպես նաև նրանց մահվան

զրանցման մասին տվյալները մեկշաբաթյա ժամկետում ներկայացնում է համապատասխան զինվորական կոմիսարիատ և Համայնքի ղեկավարին.
20/ բաժնի համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.
21/ Աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.
22/ իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.
23/ Համայնքի ղեկավարի և /կամ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

31. ***Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերը՝***

1/ անմիջականորեն ենթակա և հաշվետու են Համայնքի ղեկավարին և /կամ/ Աշխատակազմի քարտուղարին.
2/ իրենց հանձնարարված բնագավառներում վարվող քաղաքականության մասով կատարում են Համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները.
3/ կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս են հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.
4/ Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագիրը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում են առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
5/ անհրաժեշտության դեպքում՝ Համայնքի ղեկավարի և /կամ/ Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
6/ ստորագրում են իրենց և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.
7/ Համայնքի ղեկավարի և /կամ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը.
8/ Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում են բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.
9/ առաջարկություններ են ներկայացնում Համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ.
10/ կազմակերպում են քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում Աշխատակազմի քարտուղարություն.
11/ Համայնքի ղեկավարի և /կամ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում են այլ լիազորություններ:

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

32. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Համայնքի սեփականությանը փոխանցված և /կամ/ Համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում /ամրակցվում/ է Ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:
33. Աշխատակզմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

## 4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

34. Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և Ավագանու հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի, ինչպես նաև Համայնքի բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները, ինչպես նաև աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն <<բաժին>> տեսակի կառուցվածքային և /կամ/ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:
35. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն, ինչպես նաև բյուջետային հիմնարկները և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք Համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են Ավագանու կողմից:

## 5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

36. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:
37. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի /վերստուգման/՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

38. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» 12 2013թ. Թիվ 76

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ, 32-րդ հոդվածի 5-րդ մասերով և „Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Հաստատել Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի և հաստիքացուցակի առաջարկվող փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2013թ. հուլիսի 22-ի թիվ 33 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

Ավետիսյան Հերմոն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Մելքոնյան Վանիկ
Նազարյան Գոռ
[illegible] Գաբրիել
[illegible] Վաչագան
[illegible] Ռաֆիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ. ՄՈՒ[illegible]ՅԱՆ

Հավելված
Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2013թ.
դեկտեմբերի 24-ի թիվ 76 որոշման.

## Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ

| Հ/հ | Պ ա շ տ ո ն ը | Ազգանունը եվ անունը | միավորը | դրույքա-չափը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
